«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Ինտեգրման դասերը մայրենի առարկայից՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց*

Հետազոտող ուսուցիչ՝ Անուշ Մովսիսյան

Նալբանդյան Պերճուհի և Արմեն Նալպանտեանների անվան միջն. դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Հասմիկ Պողոսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....3
Գլուխ 1.Ինտեգրումը կրթական գործընթացում 4
Գլուխ 2.Ինտեգրված դասերը ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման
միջոց.....6
Ինտեգրված դասի պլան 12
Ամփոփում.....15
Գրականության ցանկ.....16

Նախաբան

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ,այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ՝ սխալ: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հասարակության զարգացման ներկա փուլում կարևոր խնդիր է համակողմանիորեն զարգացած, բարոյական բարձր հատկանիշներով օժտված անհատի ձևավորումը: Այդպիսի անհատի ձևավորման, կրթության և դաստիարակության ուղղությամբ ծավալվող աշխատանքների գործում մեծ է նաև ինտեգրված դասերի դերը, որը վճռորոշ նշանակություն ունի աշակերտների մտավոր զարգացման և ճիշտ դաստիարակության համար: Ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ: Այն կիրառվում է որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում, ռազմավարություն: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ:

Թեմայի արդիականությունը:Թեման արդիական է , քանի որ նորարարական փորձի և մեթոդների ներառումը ենթադրում են ինտեգրման գործընթաց մայրենի առարկայից:

Աշխատանքի նպատակը: Մեր նպատակն է նախկինում անհամեմատելի մասերի ամբողջական միավորում հայոց լեզվի դասաժամերին:Աշխատանքի խնդիրները: Մեր **խնդիրն** է բարձրացնել սովորողների ակտիվությունը, ուսուցման գործընթացն դարձնել ավելի ակտիվ ու հետաքրքիր՝ նպաստելով աշակերտների խմբային աշխատանքին:

Վերջնարդյունքներ՝

. աշակերտը կկարողանա աշխարհը ընկալել բազմակողմանիորեն ու նորովի,

.կկարողանա ստեղծագործական մոտեցում ցուցաբերել տարբեր առարկաներից,

.կկարողանա համադրել ոչ առնչակից առարկաները և վերլուծի համակողմանիորեն նյութը:

Մեթոդներ՝ Վերլուծական, համադրական:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ինտեգրումը կրթական գործընթացում:

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են նոր մտածելակերպ, ընկալում, համագործակցային կարողություններ, նոր հմտություններ: Այս պայմաններում կարևոր է կրթության և հանրակրթության դերի վերաիմաստավորումը: Կրթական փոփոխությունների, զարգացման ուղղություններն ու մոտեցումները պահանջում են մանկավարժական գործընթացի կազմակերպման նոր ձևեր և մեթոդներ, դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն է: Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները.

- միջառարկայական
- բազմառարկայական
- անդրառարկայական

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն ներառում և միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ:[1]

Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով

[1] lib.armedu.am:

առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

1. Երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,
2. Թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից,
3. Այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ,
4. Երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից,
5. Առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմային և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ:

Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ ևս: Մինչև ինտեգրված դաս անցկացումը, ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է: Նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ինտեգրված դասերը ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց:

Ինտեգրված դասերը ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից մեկն են: Այս տիպի դասերը կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել տեղեկատվությունը, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը:

Ինտեգրված դասերի կազմակերպումն ու անցկացումը դպրոցում կրթության բարեփոխման ու կատարելագործման նոր ուղղություններից մեկն է:[2] Ինտեգրված դասի կառուցվածքը սովորական դասից տարբերվում է հետևյալ առանձնահատկություններով՝

-հստակությամբ, ուսումնական նյութի սեղմությամբ,

-տրամաբանական փոխպայմանավորվածությամբ,

-ուսումնական նյութի տեղեկատվական մեծ տարողությամբ:

Նման դասերի պլանավորման համար ուսուցիչը նկատի է ունենալու հետևյալ պայմանը.

.ինտեգրված դասին գիտելիքներ են հաղորդվում տարբեր առարկաներից:

Այստեղից էլ պետք է որոշել ինտեգրված դասի գլխավոր նպատակը:

- Եթե որոշված է ընդհանուր նպատակը, ապա առարկաների բովանդակությունից ընտրվում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են դրա իրականացման համար:

Ինտեգրված դասի պլանավորման ժամանակ պետք է հստակ ընտրել դասի տեսակը, կառուցվածքը, ուսուցման մեթոդները, ինչպես նաև որոշել սովորողների

[2] Մկրտչյան Գ., <<Միասնացված ուսուցման արդյունավետությունը տարրական դասարաններում>>, Երևան, 2010 , էջ 43:

ծանրաբեռնվածությունը՝ գործունեության տարբեր ձևերով:

Աշխատանքում կարևորելով ինտեգրված թեմատիկ միավորի նշանակությունը, նշվում է , որ այն զարգացնում է ուսուցչի ստեղծագործական կարողությունները,

- Զարգացնում է ուսուցիչների տեսական և գործնական հմտությունները,
- զարգացնում է ուսուցիչ-աշակերտ համագործակցային խմբերի աշխատանքը,
- պլանավորում, կազմակերպում և իրականացնում է աշակերտների բազմապիսի արտադասարանական - դաստիարակչական աշխատանքների ծրագրերը,
- աշակերտների կարողություններին համապատասխան կազմակերպում է ուսուցումը:

Հանրապետության հանրակրթական դպրոցներում լիարժեք ինտեգրման ուսուցման անցնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- Ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսների ստեղծում / գրադարանային ֆոնդ, համակարգչային կենտրոն և այլն/,
- Ժամանակակից պահանջներից բխող բարձր որակավորում ունեցող ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում, համագործակցային ուսուցման ճիշտ կազմակերպում,
- Դիդակտիկ նյութերի ապահովում,
- Ուսումնական գործընթացի օպտիմալ կառուցվածքի ձևավորում:

Միջառարկայական համակարգի իրականացման համար հնարավոր է երկու մոտեցում՝

- Թեմատիկ՝ միջառարկայական իմացական խնդիրների, պրոբլեմային հարցերի, առաջադրանքների կատարման համար ուղղորդող մտքերի օգտագործում:
- Ընդարձակ պրոբլեմային՝ տարբեր ուսումնական առարկաների համար ընդհանուր միջառարկայական հիմնահարցերի առաջադրում և դրանց ընթացիկ լուծում:

Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:[3] Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական

[3] Краевский В. В. ,Основы педагогики, Учеб. Пособие для студ. Высш. Пед. Уч. заведений.-2-еизд., испр.-М.: Изд. «Академия» 2005 г., 142 ст.

նյութը: Համակարգ ձևավորելը դառնումէ դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար:[4] Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

1. Ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,
2. Համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,
3. Ինտեգրման ձևը,
4. Միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,
5. Նյութի հաջորդականության կառուցվածքը,
6. Նյութի ներկայացման միջոցները,
7. Դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,
8. Տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը /հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա/, կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը: Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասը արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է:Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Որպես համակարգ ձևավորող բաղադրիչ՝ կարող է հանդես գալ

[4] Кумарин В.,Педагогика при родосообразности и реформа школы, М.1996. ст 71 :

ինտեգրվող բովանդակության միայն այն հատվածը, որը որոշվում է առաջադրանքի նպատակով: Որպես այդպիսի բաղադրիչներ՝ կարող են լինել առանձին հասկացություններ, օրենքներ, մտքեր, ուսուցման մեթոդներ և միջոցներ: Համակարգ ձևավորող բաղադրիչի առանձնացումը կարևորվում է նրանով, որ հենց դրանով է որոշվում ինտեգրվող նյութը, որպեսզի այն մատուցվի ամբողջովին: Ուստի ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունը: Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատմանհամակարգը:[5]

Մայրենիի միասնացված յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պիտի ապահովի գիտելիքի ինտեգրման բազմաթիվ դրվագներ: Այդ ինտեգրումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական, այնպես էլ միջառարկայական կապերի դրսևորմամբ: Վերջինիս ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել, այլև իմացածը կյանքում կիրառել: Մայրենիի միասնացված դասընթացի միջոցով խնդիր է դրվում ապահովելու հայոց լեզվի ուսուցման՝ առարկայական չափորոշչով սահմանված նպատակներից մեկը, այն է՝ «սովորողի մեջ ժամանակակից գրական հայերենի նորմային համապատասխան խոսք կառուցելու մշակումը, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողությունների զարգացումը»:

Միջառարկայական կապերի ինտեգրումը մայրենի լեզվի ուսուցչին հնարավորություն է տալիս լրացնել աշակերտների գիտելիքների պակասը՝ պատմությունից, հայրենի բնությունից, երաժշտությունից ու նկարչությունից և այլն: Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով

[5] «Народное образование», 2004 г. 62 ст.

նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղենիշ է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազմակողմանի զարգացման առումով: Քիչ չէ այն ուսուցիչների թիվը, որոնք գերադասում են աշխատել միայն ավանդական մեթոդներով: Նրանք դժվարությամբ են ընդունում բարեփոխումներով պայմանավորված նորը:[6]

Այնուամենայնիվ, ինտեգրված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեության մեջ: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն և աշխուժություն:

Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով , նորություններով, և առաջ է գալիս ստեղծագործելու կարողությունը, հետազոտական նաև նախագծային աշխատանք կատարելու կարևորությունը:

Բացի նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել դասավանդվող առարկան նորովի, իսկ սովորողների մեջ՝ զարգացնելստեղծագործական մտածողությունը և ինքնակրթվելու հնարավորություն ստեղծելը:

[6] Марфенин Н. Н. Чему и как учить для устойчивого развития? // Экология ижизнь.2011. № 8(117). С. 9-

Ինտեգրված դասի պլան

Ինտեգրման տեսակը՝ Միջառարկայական

Առարկան՝ Մայրենի

Դասարանը՝ 6-րդ

Տևողությունը՝ 90 րոպե

Թեման՝ ,,Ազնավուրը Ազնավուրի մասին,,

Ինտեգրման ուղենիշները՝

Մայրենի

Կարողանալ գրավոր և բանավոր շարադրել մտքերը տեքստի շուրջ,օգտագործել լեզվական գիտելիքները:

Աշխարհագրություն /ուս. ՝ Ա. Հակոբյան /

Տեղեկություններ տալ Ֆրանսիայի,Հայաստանի մասին :

Երաժշտություն /ուս ՝ Թ. Ղուկասյան /

Ունկնդրել Շառլ Ազնավուրի երգերը:

Դասի նպատակը.

.Զարգացնել արձակ տեքստը արտահայտիչ կարդալու կարողություններ:

.Տեղեկություններ տալ Ազնավուրի մասին:

Վերջնարդյունքը.

Կկարողանա սահուն ընթերցել տեքստը:

Կկարողանա ներկայացնել բովանդակությունը:

Կբնութագրի, կբացահայտի հերոսին

Անհրաժեշտ նյութեր և միջոցներ՝

.Ազնավորի և նրա ընտանիքի նկարների ցուցադրում:

. Կրիչ Ազնավուրի ստեղծագործությունները ունկնդրելու համար:

Համագործակցային խմբերի նպատակը.

- Խմբային աշխատանք կատարելու հմտություններ:
- Բնագրի վրա աշխատելու կարողություններ:
- Հիմնական գաղափարների բացահայտում:

Դասի ընթացքը՝

-Ջերմացում, տնային աշխատանքի ստուգում,

.Խթանող հարց՝

.Կիրառել Մտագրոհ մեթոդը

.Վերահսկում և միջամտում.

.Հետևել համագործակցությամբ աշխատելու կանոններին:

Նոր նյութի հաղորդում՝

1.Դասանյութի բովանդակության վերարտադրում: /Ա.Սահակյան /

2. Քարտեզի վրա աշխատանք /Ռ.Հմայակյան /

3.Ազնավուրի երգերի ունկնդրում /Ա.Սարգսյան /

Իմաստի ընկալում՝

1.Աշակերտները կարդում են տեքստը:

2.Տեքստից դուրս են գրում հոմանիշները:

Կատարում են բառային աշխատանքը(բառերի բացատրությունը):

3.Ունկնդրում են Ազնավուրի մի քանի ստեղծագործություններ:

Այդ ընթացքում բաժանվեց թղթեր, հանձնարարվեց նկարել ունկնդրած երաժշտությունից որևէ պատկեր:

4.Քարտեզագրում

5.Գնահատում(նախօրոք ներկայացնել գնահատման ձևը).

Խմբային աշխատանքների գնահատման (ռուբրիկ) սանդղակ.

Կշռադատում՝

Ի՞նչ փաստերի և իրադարձությունների ծանոթացանք:

Որո՞նք առավելապես հետաքրքրեցին ձեզ:

Դասն հանձնարարվեց սովորել պատմել:

Անդրադարձ.

- Նախատեսված ո՞ր աշխատանքը չկատարվեց:
- Ի՞նչ կարելի է ավելացնել;
- Ելքի քարտերի բաժանում

Ամփոփում

Հաշվի առնելով սեփական փորձից ձեռք բերված մեթոդները՝ կարող ենք ասել, որ այս մեթոդները հնարավորություն են տալիս դասապրոցեսն իրականացնել մաքսիմալ արդյունավետ, տալով սովորողներին գիտելիք հայոց լեզվից, հետաքրքրություն առաջացնել նաև այլ առարկաների նկատմամբ:

Այն փաստը, որ աշակերտները կարող են նաև ինքնուրույն ստեղծել օրվա դասի թեմային վերաբերող ցուցադրական նյութեր, օրինակ ՝ խաղեր ներկայացնել դասն ավելի արդյունավետ և հետաքրքիր դարձնելու համար: Նաև հնարավորություն է տալիս աշակերտներին ավելի լավ յուրացնել տվյալ թեման, համակարգել ստացած գիտելիքները, ինչպես նաև զարգացնել ստեղծագործական միտքը: Աշակերտներին ներգրավելով նման աշխատանքներում՝ մենք՝ ուսուցիչներս, կկարողանանք հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ:

Ուսումնասիրելով ինտեգրված դասերի առանձնահատկությունները և շեշտելով դրանց կարևորությունը՝ հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

Ինտեգրված դասերը դասավանդման համակարգված, կանոնակարգված ռազմավարություն են , որի դեպքում աշակերտները փոքր խմբերով համատեղ աշխատանք են ծավալում ընդհանուր որևէ նպատակի իրագործման կամ լուծման համար:

Ինտեգրված ուսուցման մեթոդների հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով:Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածողություն, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից:

Դա կրթության բովանդակության ինտեգրումն է, որը հնարավորություն է տալիս գիտական հիմունքներով ստեղծել աշխարհի միասնական պատկերը, վերացնել տարբեր առարկաներում նյութերի կրկնությունն ու կրկնօրինակումը:

Գրականության ցանկ

1. lib.armedu.am
2. Մկրտչյան Գայանե <<Միասնացված ուսուցման արդյունավետությունը տարրական դասարաններում>>, Երևան, 2010:
3. Краевский В. В. Основы педагогики, Учеб. Пособие для студ. Высш. Пед. Уч. заведений.-2-еизд., испр.-М.: Изд. «Академия» 2005 г. 256ст.
4. Кумарин В.Педагогика при родосообразности и реформа школы, М.1996:
5. «Народное образование», М. ,2004 .
6. Марфенин Н. Н. Чему и как учить для устойчивого развития? // Экология ижизнь.2011. № 8(117). С. 9-